ԳԱՐՈՒՆ

Ահա արեւելք՝ թագուհի դառած
Կարմիր ծիրանի առել իւր վերան
Եւ ամպի խմբերն ալ պրսակ կազմած
Արթուն սպասում են արեւին գարնան։

Եւ բարձրանում է արեւ բոցափայլ,
Երկինքը գրկում հրդեհ վարդագոյն,
Զարթնում ընութիւն փայլից ոգեզմայլ
Ե՛ւ «ողջո՛յն» ձնում երկնից թագուհուն։

Վարդ ու մանուշակ, շուշան ու յասմիկ
Ժրպտում են գարնան ղէմքով խընդագին,
Շոյելով նրանց զեփիւռն ու հովիկ
Ջերմ համբոյրներ են տանում արեգին։

Եւ լոր ու արտուտ, ծիծեռ ու սոխակ
Դիւթիչ դայլայլով ճախրում են օդում,
Ձայնակից եղած նրանց ջինջ առուակ
Կարկաչ շըրթունքով մաղթանք մրմնջում։

Երփնաթերթ անտառք, ծաղկերանգ դաշտեր
Գարնան կենսաբոյր ձորձով պաճուճուած
Շնորհապարտ սրտով օրհնում են եթեր,
Օրհնում եւ ուղղում ուղերձ առ Աստուած։

Մարդիկ զոհ սրտով, ուրախ ու զուարթ
Օրհնում են նոյնպէս կամքը երկնային,
Որ գարնան գալով այնքա՞ն ցաւ ու դարդ
Դալկացած հոգուց ելան, գնացին։

Ու չկայ մի մարդ, որ գարնան գալուն
Ցըխրի, տրտնջայ կամ դըժգոհ մընայ.—
Չէ՞ որ գարունը շողուն է, փայլուն,
Չէ՞ որ նորա մէջ այնքան թարմ կեանք կայ։

ԿԱՑԵՐ